# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՈՐՈՇՈՒՄ

19 ապրիլի 2019 թ. N 278-Ա

ք. Ստեփանակերտ

## ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 22-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 133-Ն որոշմամբ հաստատված կարգի 30-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

Անհետաձգելի համարվող՝ Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 13-ի N 61-Ա որոշման հավելվածի 424100 «Մասնագիտական ծառայություններ» հոդվածից՝ համակարգի ծրագրի տեղադրման և կարգաբերման և համակարգի ծրագրի մշակման ծառայությունների մատուցման 2 900 000 (երկու միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով և 512200 «Վարչական սարքավորումներ» հոդվածից՝ կենտրոնացված համակարգչի, անխափան սնուցման սարքի, նոութբուքի, A3 ձևաչափի սկաների ձեռքբերման 2 400 000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով գնումներն իրականացնել «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված բանակցային ընթացակարգով:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք № 1.2/32
23 04 2019թ.